

**ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՆԱԴՅՈՒՄՈՒԹՅԱՆ ԳՐԱՌՄԱՆ, ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

19-րդ դարը հայ ժողովրդի կյանքում նշանավորվեց ազգային ինքնագիտակցության ու ինքնահաստատման զարթոնքով, որն իր հերթին պայմանավորված էր Եվրոպայում ընթացող տնտեսական, քաղաքական-հասարակական կյանքի նոր զարգացումներով: Այդ նոր պայմաններում ժողովուրդները ձգտում էին հրապարակի վրա դնել իրենց հոգևոր ու մտավոր արժեքները, հաստատությունները, ապացուցելու, հաստատելու իրենց ինքնությունը, ազատ ապրելու իրավունքը: Ժողովրդական բանահյուսությունը այդ արժեքների շարքում կարևոր նշանակություն ուներ և իմաստավորվում էր այդ առումով:

Հայ իրականության մեջ, մասնավորապես Արևելյան Հայաստանում, ժողովրդական բանահյուսության հանդեպ գիտակցված վերաբերմունքը սկսվել է Խ. Աբովյանից: 19-րդ դարի երկրորդ կեսին հետաքրքրությունը ժողովրդական հոգևոր արժեքների, բանարվեստի նկատմամբ ընդունում է համազգային բնույթ: Հասարակական լայն շրջանները սկսում են հետամուտ լինել, գրի առնել ու լույս աշխարհի հանել բանարվեստի տարբեր ժանրերի ստեղծագործություններ: Համազգային հոսանքի մեջ էր նաև այնպիսի մի ինքնատիպ ազգագրական շրջան, ինչպիսին Ղարաբաղն է:

Նախապես փորձել ենք որոշ փուլեր սահմանել գրառման և հրատարակման պատմության մեջ: Սակայն այդ սահմանումը միանգամայն պայմանական է, պարզապես հնարավորինս պահպանել ենք ժամանակագրական հաջորդականությունը:

Ղարաբաղի բանահյուսության գրառման պատմությունը սկսվում է 1860 թ.: 1860-ի մայիս-օգոստոս ամիսներին Ղարաբաղի վարչական ու հոգևոր կենտրոն Շուշիում Ալեքսան, Առաքել և Գրիգոր Բահաթրյան-

ները քաղաքի և մերձակա գյուղերի բնակիչներից գրի են առնում հեքիաթներ, գրույցներ, զվարճախոսություններ, ջանգյուլունի երգեր՝ խաղիկներ, ազգագրական նյութեր, ինչպես օրինակ՝ վիճակահանության ծիսական արարողությունը, որը տեղացիներն անվանում են «խնդունի տալ» և այլն: Բահաթրյանների գրառումները ոչ միայն ամենահին են Ղարաբաղում, այլև հայ ժողովրդական հեքիաթների ամենավաղ հայտնի գրառումներն են ընդհանրապես: Այդ առումով նրանք ունեն բացառիկ արժեք ու կարևորություն, թեև ասացողների և գրառման հանգամանքների վերաբերյալ տեղեկությունները կցկտուր են:

1881 - 1882 թթ. արդեն նշանավոր մանկավարժ Առաքել Բահաթրյանը Ներսիսյան դպրոցում պաշտոնավարելիս, արձագանքելով բանահավաք-հրատարակիչ Տիգրան Նավասարդյանի՝ հայ ժողովրդի հոգևոր արժեքները փրկելու կոչին, նրան է հանձնում Բահաթրյանների ձեռագիր հավաքածուն: Տ. Նավասարդյանը Բահաթրյանների գրառած հեքիաթների մի մասը լույս է ընծայում<sup>1</sup>: Հեքիաթները լրիվ, թվով 61 միավոր, հրատարակվում են Հայ ժովրդական հեքիաթների գիտական հրատարակության VI հատորում<sup>2</sup>: Նույն հատորում զետեղված են նաև նրանց գրառած զվարճախոսությունները:

Բահաթրյանների ձեռագիր հավաքածուն<sup>3</sup>, այդ թվում նաև 1869 թ. նոյեմբերին Մոսկվայից ուղարկած երկու հեքիաթներ, գրի առած Շուշիի խոսվածքով, Հարություն Թավրիզյանի կողմից, գտնվում է Հայաստանի ազգային արխիվում<sup>4</sup>:

Տ. Նավասարդյանի կոչին արձագանքում է նաև գյուղական ուսուցիչ Միքայել Տեր-Հովհաննիսյանը: Իր հայրենի Վարանդայի Նորշեն գյուղում 1881 թ. փետրվար-մայիս ամիսներին նա գրի է առնում և ուղարկում հրատարակիչ Տ. Նավասարդյանին ավանդական բանահյուսության մի գողտրիկ փունջ՝ երգեր, մանկական խաղիկներ, հեքիաթ, վիպական մանր ժանրերի նմուշներ, բարբառային բառերի բացատրական բառարան (ազգագրական բովանդակությամբ): Նրա հավաքածուն լույս

---

<sup>1</sup> Տ. Նավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, գիտ. հրատ., պր. IX, Թիֆլիս, 1902, պր. X, Թիֆլիս, 1903:

<sup>2</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VI, գիտական հրատ., Երևան, 1973:

<sup>3</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 484:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 484, ց. 1, գ. 1, թթ. 298, 308:

է տեսել մասամբ<sup>1</sup>, պահվում է Հայաստանի ազգային արխիվի Տ. Նավասարդյանի ֆոնդում<sup>2</sup>:

1883 թ. Թիֆլիսում լույս է տեսնում Սակար եպիսկոպոս Բարխուդարյանի Պըլը Պուղի ժողովածուն: Այն կազմված է նրա կողմից գրառած Ղարաբաղի հայության բանահյուսական կենցաղում ամենասիրված ու լայն տարածում գտած ժողովրդական զվարճախոս Պըլը Պուղու վերաբերյալ ստեղծված բանահյուսության նմուշներից: Մ. Բարխուդարյանը ծնունդով Ղարաբաղի Խանածախ գյուղից էր: Հետամուտ իր պատմագիտական նախասիրություններին, նա շրջել է Ղարաբաղում՝ պատմական Արցախում և գրի առել կիսավիպական, կիսապատմական հերոսին առնչվող բազմաթիվ զրույցներ և ապա լույս ընծայել նրա մասին կենսագրական տեղեկություններով, բարբառի մասին քերականական գիտելիքներով հանդերձ: Այդ ժողովածուով Մ. Բարխուդարյանի բանահավաքչական գործունեությունը չի ավարտվում: 1898 թ. լույս է տեսնում նրա «Բարոյական առածներ» ժողովածուն<sup>3</sup>, իսկ նրա պատմագիտական աշխատությունների էջերում բազմաթիվ զրույցներ ու ավանդություններ են սփռված, որ նա գրի է առել իր շրջագայությունների ընթացքում<sup>4</sup>:

Ղարաբաղի բանահյուսության մի շարք նյութեր են տեղ գտել Ռուսաստանի ժողովրդական կրթության նախարարության հանդեսում<sup>5</sup>: Թեև ռուսերեն թարգմանված, բայց նրանք վկայում են մի շարք բանահյուսական իրողությունների գոյությունը ազգագրական շրջանում:

19-րդ դարի 80-ականներին Շուշիի հասարակական կյանքը համակված էր ազգային ինքնագիտակցության գաղափարներով, կրթական, մշակութային մթնոլորտի դրական զարգացումներով: Պատահական չէր անվանի հայագետ, այն ժամանակ Շուշիի թեմականի ուսուցիչ Մանուկ Աբեղյանի գրի առած ազգային հերոսավեպի երկրորդ պատումի

---

<sup>1</sup> Տ. Նավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, պր. VI, էջ 32 - 33, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VI, էջ 175 - 176:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 484, ց. 1, գ. 7, ք. 27 - 61:

<sup>3</sup> Բարոյական առածներ, Հավաքագրեց ուստա Վևորգ Բարխուտարյանց, Տփլիս, 1898:

<sup>4</sup> Մ. Բարխուտարյան, Արցախ, Բագու, 1898:

<sup>5</sup> Сборник материалов для описания местностей и племен Кавказа, кн. кн. VI, VII, XIII, XIX, XXIV, Тифлис, 1888 - 1898.

հրատարակությունը Շուշիում<sup>1</sup>: Մինչ տպագրությունը Աբեղյանը վեպն ընթերցել էր Շուշվա հասարակության կազմակերպած գրական երեկոներին<sup>2</sup>:

Չափազանց ուշագրավ և ոչ պատահական փաստ է հայ ժողովրդագիտական առաջին հանդեսի հիմնադրումը Շուշիում: Եվրոպայում բարձրագույն կրթություն ստացած, ծագումով ղարաբաղցի երվանդ Լալայանի ջանքերով 1896 թ. լույս է տեսնում «Ազգագրական հանդեսի» առաջին համարը: Այնուհետև հանդեսի հրատարակությունը փոխադրվում է Թիֆլիս, սակայն Ղարաբաղը մնում է «Հանդեսի» ուշադրության կենտրոնում: «Հանդեսի» Բ գրքում հրատարակվում է Ղարաբաղի Վարանդա գավառին նվիրված ազգագրական-բանահյուսական աշխատությունը, որի որոշ բաժինների վերաբերյալ նյութերը գրի է առել Երվ. Լալայանը, առանձին բաժինների համար խմբագրին նյութեր են տրամադրել նաև Լ. Աթաբեկյանը, Ղ. Տեր-Ղազարյանը, Յ. Տեր-Հովհաննիսյանը<sup>3</sup> և այլք: Հետագայում «Վարանդան» վերահրատարակվում է Երվ. Լալայանի երկերի երկրորդ հատորում (1988 թ.)<sup>4</sup>:

Ղարաբաղի ժողովրդական բանահյուսության գրառման և տպագրության գործում իրենց լուծման են ներդրել Խաչիկ Ժայրագույն վարդապետ և Արամ Դադյանները: Դադյան եղբայրները սերում են Վարանդայի Թաղավարո գյուղից: Խաչիկ վարդապետը հոգևոր պաշտոններ է վարել Ղարաբաղում: Այնուհետև 19-րդ դարի 90-ականներին Դադյանները տեղափոխվել են Էջմիածին: Խաչիկ վարդապետը հայտնի է իբրև Ջվարթնոց տաճարի առաջին պեղող և այդ ասպարեզում նրա ծառայությունն անգնահատելի է: Դադյան եղբայրները Ղարաբաղում գրառել են բանահյուսական տարբեր ժանրերի՝ երգերի, հեքիաթների, ջանգյուլումի՝ խաղիկների հետաքրքիր նմուշներ, որոնք տպագրվել են մասամբ: Խ. Դադյանի ծիսական երգերի մի փունջ տպագրվել է «Արարատ» ամսագրում<sup>5</sup>, իսկ Արամ Դադյանի գրառած ջանգյուլումի՝ վիճակի երգերի ստվարաթիվ հավաքածուն, ուշագրավ բառարանով հանդերձ՝ «Ազգա-

<sup>1</sup> Դավիթ և Միեր (ժողովրդական դյուցազնական վեպ), Շուշի, 1889:

<sup>2</sup> Ս. Դարությունյան, Մանուկ Աբեղյան, Երևան, 1970, էջ 30:

<sup>3</sup> Ազգագրական հանդես, գ. Բ, Թիֆլիս, 1897, էջ 5 - 243:

<sup>4</sup> Ե. Լալայան, Երկերի ժողովածու, հ. II, Երևան, 1988:

<sup>5</sup> «Արարատ» ամսագիր, 1895, № 12, էջ 469 - 471:

գրական հանդեսում»<sup>1</sup>: Խ. Դադյանի ձեռագիր ժառանգությունը, այլ ազգագրական շրջաններից հավաքած նյութերի հետ պահվում է Հայաստանի ազգային արխիվում (ֆոնդ 319), իսկ Արամ Դադյանի գրի առած ղարաբաղյան հեքիաթները՝ ձեռագիր վիճակում՝ Հայաստանի ժողատեղծագործության գիտամեթոդական կենտրոնում:

Ղարաբաղի բանահյուսության գրառաման ու հրատարակման պատմության հաջորդ փուլը առնչվում է Կոստանդին Մելիք-Շահնազարյանի, առավելապես ծանոթ Տմբլաչի Խաչան կեղծանունով, Սարգիս Իսրայելյանի և Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի գործունեության հետ:

4. Մելիք-Շահնազարյանը բնիկ շուշեցի է: Նրա հայացքների ձևավորումն ու գործունեությունը ընթանում է այն ժամանակաշրջանում, երբ հայկական հասարակական կյանքի կենտրոնում հայ ժողովրդական հոգևոր մշակույթի արժեքների կորստից փրկելու մտահոգությունն էր: 80-ականին իր գրառած նյութերը նա վարպետորեն օգտագործում է իր իսկ հեղինակած բարբառագիր ֆելիետոններում<sup>2</sup>: Այնուհետև Եվրոպայում բարձրագույն գյուղատնտեսական կրթություն ստանալով և վերադառնալով հայրենի երկիր, նա շարունակում է բանահավաքչությունը: Նրա ձեռագիր հավաքածոն գտնվում է ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի արխիվում և մասամբ՝ երկու հեքիաթ և վիպական մանր ժանրերի նմուշներ հրատարակվել են<sup>3</sup>:

Բանահավաքչական բեղուն գործունեություն է ունեցել Սարգիս Իսրայելյանը: Նա ծնվել ու մեծացել է Վարանդայի Նախիջևանիկ գյուղում, նահապետական, ազգային ավանդներին խստորեն հետամուտ գյուղացու ընտանիքում: Նրանց գերդաստանը գյուղում հայտնի էր Պիծի Ասրունց անվամբ: Ս. Իսրայելյանը ողջ կյանքը նվիրել է մանկավարժությանը, մի հանգամանք, որը նպաստել է նրա անմիջական շփումներին ժողովրդի հետ, զուգահեռաբար բանահավաքչությամբ

---

<sup>1</sup> Վարանդայի ժողովրդական բանահյուսությունից, «Ազգագրական հանդես», գգ. XVII - XIX, Թիֆլիս, 1908 - 1910:

<sup>2</sup> Կ. Մելիք-Շահնազարյան, «Ձուռնա Տմբլա», Ղըլըցի կնանոց պենը փեշակը, Շուշի, 1882:

<sup>3</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VI, էջ 91 - 94, 613 - 618, «Համդես ամսօրյա», Վիեննա, 1928, էջ 552 - 559, 1930, էջ 359 - 362:

զբաղվելուն: Ս. Իսրայելյանը թողել է բանահյուսական բազմաժանր հավաքածո՝ հեքիաթներ, զրույցներ, զվարճախոսություններ, ավանդու-թյուններ և այլն: Նրա գրառումներն ընդգրկում են մոտ կեսդարյա ժա-մանակաշրջան՝ 20-րդ դարի 10-40-ական թթ.: Նրա գրառած հեքիաթ-ները՝ 23 սյուժե, լույս են տեսել Հայ ժողովրդական հեքիաթների գիտա-կան հրատարակչության VI հատորում<sup>1</sup>, իսկ Պըլը Պուղուն նվիրված զվարճախոսություններն՝ առանձին գրքով, որդու՝ ժողովրդական ճար-տարապետ, մեծանուն Ռաֆայել Իսրայելյանի նկարներով<sup>2</sup>: Ս. Իսրայել-յանի ձեռագիր հավաքածոն նույնպես գտնվում է Հնագիտության և ազ-գագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի արխիվում:

Բազմարդյուն է եղել Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի բա-նահավաքչական գործունեությունը: Այն ընդգրկում է անցյալ դարի 20 - 40 -ական թվականները և ներկայացնում է գլխավորապես Շուշին, Վարանդայի, Հադրութի, Ասկերանի գյուղերը:

Մ. Գրիգորյան-Սպանդարյանը ծնվել և սկզբնական կրթությունն ստացել է Շուշիում: Հայ մշակույթի պանոթյանը ծանոթ «Նոր Դարի» խմբագիր Սպանդար Սպանդարյանը բանահավաքի հորեղբայրն է: Այնուհետև նա տեղափոխվել է Բաքու, ավարտել Բաքվի մանկավար-ժական ինստիտուտը, թեկնածուական թեզ պաշտպանել և երկար տա-րիներ դասախոսել նույն ինստիտուտում: Բնակվելով Բաքվում, նա պարբերաբար այցելել է հայրենի երկրամաս: Այցելությունների ընթաց-քում, իր նախկին ուսանողների, ծանոթ-բարեկամների միջոցով ու օգ-նությամբ նրան հաջողվել է գրի առնել լեռնաշխարհի ժողովրդի բառու-բանին, ազգագրությանը, բարբառին, Շուշիի հայության ողբերգու-թյանը վերաբերող արժեքավոր նյութերի մի պատկառելի քանակու-թյուն: Մ. Գրիգորյան-Սպանդարյանի բանահյուսական հավաքածոն բազմաժանր է. հեքիաթներ, զրույցներ, առակներ, ավանդություններ, զվարճախոսություններ, երգեր, վիպական մանր ժանրերի հարյուրա-վոր նմուշներ և այլն: Հատուկ հետաքրքրություն ունեն բանասացների վերաբերյալ նրա կազմած կենսագրականները:

Բանահավաքի հարուստ ձեռագիր հավաքածոն գտնվում է Հնագի-տության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի ար-

<sup>1</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VI, Երևան, 1973:

<sup>2</sup> Պըլը Պուղի, հավաքեց և մշակեց Ս. Իսրայելյանը, Երևան, 1956:

խիվում, գերակշիռ մասը տպագրվել է: Հայ ժողովրդական հեքիաթների գիտական հրատարակության V հատորը կազմված է բացառապես նրա գրառումներից<sup>1</sup>: Հեքիաթներ, ավանդություններ, առակներ, զրույցներ, վիպական մանր ժանրերի բանաձևային բանահյուսության նմուշներ և 1804 միավոր է պարունակում «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը» ժողովածուն<sup>2</sup>: Մ. Գրիգորյան-Սպանդարյանի հավաքածոյի մի մասը տակավին անտիպ է:

Անցյալ դարի երկրորդ կեսին հայ ժողովրդական հոգևոր արժեքների գրառումն ու տպագրությունը, նաև հետազոտությունը մեծապես աշխուժանում է, ինչը պայմանավորված էր ազգային կյանքում տեղի ունեցած նշանակալից տեղաշարժերով: Երկիրը ձերբագատվել էր գաղափարական կապանքներից, հայ հասարակությունը փորձում էր լուծումներ գտնել ավելի քան կես դար տևող ազգային հոգեմաշխնդիրներին (գերյալ Կարս, Սուրմալու, Նախիջևան, Ղարաբաղ):

1958 թ. Հայկական ԽՍՀ ԳԱ ստեղծվում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտը, որի կազմում հայ ժողովրդական բանահյուսության բաժինը: Ղարաբաղի բանահյուսության գործը կենտրոնանում է այդ բաժնում: Բանահավաքչությունը դառնում է առաջնահերթ խնդիր՝ փրկել կորստից ինչ հնարավոր է: Ի պաշտոնե բանահավաքչությամբ են զբաղվում բաժնի աշխատակիցներ Ա. Ղազիյանը, Ս. Վարդանյանը, Մ. Առաքելյանը: Բնօրրանում ևս հանդես են գալիս ձեռնհաս, բանարվեստի համն ու հոտը ընկալող նվիրյալներ Մաքսիմ Մխիթարյան, Բարխուդար Ղազիյան, Լևոն Հարությունյան, Միքայել Օհանջանյան: Ստեփանակերտում 1960 թ. բացված ժողովրդական ստեղծագործության մարզային տունը նույնպես իր սիրող-թղթակիցների միջոցով աշխատանքներ է տանում այդ ուղղությամբ: Բանահավաքչությանը զուգահեռ ընթանում է տպագրության գործը:

Ստեփանակերտի ժողտեղծագործության տունը 1978 թ. լույս է ընծայում ժողովրդական բառուբանի մի ընտրանի, բաղկացած հեքիաթներից, առակներից, ավանդություններից, վիճակի երգերից և վիպական մանր ժանրերի նմուշներից: Ցավոք, բանահյուսական նյութը

---

<sup>1</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. V, կազմեցին Մ. Գրիգորյան և Ա. Նազինյան, Երևան, 1966:

<sup>2</sup> Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը, գրառումը, բնագրի պատրաստումը և ծանոթագրությունները Մ. Մ. Գրիգորյան-Սպանդարյանի, Երևան, 1971:

անհրաժեշտ ժանոթագրություններ չունի: Հայ ժողովրդական հեքիաթների գիտական հրատարակության VI հատորում զետեղված են 1961 թ. Շուշիի, Մարտակերտի, Ստեփանակերտի գյուղերի բնակիչներից գրառած բանահավաք Մ. Մխիթարյանի 11 հեքիաթները: Նույն հրատարակության VII հատորը գերազանցապես ընդգրկում է Մ. Առաքելյանի 1960-ական թվականներին Ստեփանակերտի, Հաղրուփի, Մարտակերտի, Մարտունու շրջաններում գրի առած արծակ պատմողական բանահյուսության նյութերը<sup>1</sup>: Ա. և Բ. Ղազիյանների բանահավաքչական գործունեությունը սկսվել է 1960-ական թվականներին: Նրանց հավաքածուն ընդգրկում է Ղարաբաղի բոլոր շրջանները, նաև Կուրի ձախափնյակի որոշ հայկական գյուղեր և Բաքու քաղաքը: Գրառումները կատարվել են ձայնագրիչով: Ծավալուն հավաքածուն պահվում է Հնագիտության ինստիտուտի բանահյուսության բաժնի արխիվում: Այն մասամբ տպագրվել է «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 15 -րդ պրակով<sup>2</sup> և որոշ նյութեր, իսկ Բ. Ղազիյանինը՝ Հայ ժողովրդական հեքիաթների VII հատորում<sup>3</sup>: Ս. Վարդանյանը բանահավաքչական գործունեությունն սկսել է 1970-ից: Նա գրառումներ է արել ոչ միայն Ղարաբաղում, այլ նաև Երևանում՝ ղարաբաղցիներից, նախկին բաքվեցիներից: Նրա գրառած տարբեր ժանրերի նյութերի հավաքածուն նույնպես գտնվում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի արխիվում: Ս. Վարդանյանի և Ա. Ղազիյանի գրառումների մի գողտրիկ ընտրանի հրատարակվել է<sup>4</sup>: Ըստ որում Բ. Ղազիյանը գրառումները կատարել է Բաքվում, 1970-ական, իսկ Ս. Վարդանյանը՝ Երևանում 90-ական թվականներին, նախկին բաքվեցիներից:

Ղարաբաղի բանահյուսությունը կորստից, մոռացումից փրկելու գործում մեծ վաստակ ունի հայոց լեզվի և գրականության գյուղական բազմամյա ուսուցիչ Լևոն Հարությունյանը: Նա բնիկ աշանցի է (ԼՂՀ, Մարտունու շրջ.), մեծացել և՛ ապրել, և՛ հոգեկան սնունդ է ստացել ազգային, նահապետական ավանդներով հագեցված միջավայրում: Այժմ էլ

<sup>1</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VII, Երևան, 1979:

<sup>2</sup> Արցախ, Հայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնասիրություններ), պր. 15, Երևան, 1983:

<sup>3</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VII, էջ 379 - 392:

<sup>4</sup> Բաքվի հայոց բանահյուսությունը, կազմ.՝ Ս. Վարդանյան, Ա. Ղազիյան, Երևան, 2004:



ապրում է Աշանում: Քաջածանոթ լինելով իր բնօրրանի բառուբանին, ժողովրդի կյանքին ու կենցաղին, սովորություններին ու բարբառին, Լ. Հարությունյանը տարիների ընթացքում կարողացել է նրբորեն պեղել ժողովրդի հիշողության ծալքերը, լույս աշխարհի հանել իրողություններ, որ հասու չեն նույնիսկ ամեն մի բանահավաքի: Նրա երկու ծավալուն ժողովածուները «Նշխարներ Արցախի բանահյուսության» խորագրով բազմաժանր բանահյուսական նյութերի հետ ընդգրկում են նաև ազգագրական, բարբառագիտական, պատմական, աշխարհագրական ուշագրավ տեղեկություններ<sup>1</sup>:

Ավելորդ չենք համարում նշել, որ Ղարաբաղի բանահյուսության տարբեր ժանրերի նյութերն ընդգրկվել են հայ ժողովրդական բանահյուսության ժանրային համահավաք բնագրերի տպագրություններում, այլևայլ ուսումնասիրությունների էջերում:

Բանահավաքչական աշխատանքները Ղարաբաղում շարունակվում են նաև մեր օրերում, թեև ոչ նախկին ոգևորությամբ ու ծավալով: Ա. Ղազիյանը, Ս. Վարդանյանը գրառումներ են անում ինչպես Երևանում, այնպես էլ բնաշխարհում: Ավանդականը մղվել է երկրորդ պլան, մեր օրերում կենցաղավարում են առավելապես ազատագրական պայքարի երգեր (նաև՝ ռուսալեզու) գրույցներ, զվարճախոսություններ, հուշեր:

Մոտ 150 տարվա ընթացքում կուտակված բանահյուսական հարուստ ու բազմաժանր նյութը ամբողջական հետազոտության չի արժանացել, թեև դրա անհրաժեշտությունն առկա է: Գրվել ու տպագրվել են մի շարք հոդվածներ բանահյուսության այս կամ այն ժանրի, բանահավաքների գործունեության և այլ հարցերի վերաբերյալ<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, գ. 1, Երևան, 1991, գ. 2, Ստեփանակերտ, 2004:

<sup>2</sup> Ս. Վարդանյան, Բանահյուսական նյութեր Լեռնային Ղարաբաղից, Լրաբեր հաս. գիտ., 1971, № 8, Պաշտամունքային տարրերը «Ալեւանների» տարբերակների համակարգում, ՊԲՀ, 2002, № 2, Թ. Հայրապետյան, Կ. Մելիք-Շահնազարյանի կյանքը և գործը, Երևան, 2001, (ծեռագիր, թեկնած. թեզ), գլուխ «Կ. Մելիք-Շահնազարյանի ժողովրդագիտական գործունեությունը», էջ 98-123, Ա. Ղազիյան, Ղարաբաղի բանահյուսությունը 1970-1973 թթ. գրառումների հիման վրա, ՊԲՀ, 1974, № 4, Ա. Ղազիյան, Ղարաբաղի զվարճախոս Պլըլ Պուղին, Լրաբեր հաս. գիտ., 1978, № 9, Ա. Ղազիյան, Հայ ժողովրդական սնահավատական գրույցների դասակարգման հարցի շուրջ, Լրաբեր հաս. գիտ., 1983, № 8, Ա. Ղազիյան, Ազատամարտի արտացոլումը Ղարաբաղի ժողովրդական

Բահաթրյանների հավաքածոյի հեքիաթների տիպերն ու սյուժեների տարբերակները մեկ-երկու տասնամյակ անց հայտնի դարձան Հայաստանի այլ ազգագրական շրջաններից: Ըստ որում տարբերակները համեմատելի են նույնիսկ պերսոնաժների անվանումների մակարդակով՝ Արևամանուկ, Օձամանուկ և այլն, մի հանգամանք, որը հաստատում է մի ընդհանուր ազգային սուբստրատի, երկացանկի գոյության մասին: Մյուս կողմից՝ այդ հանգամանքը հաստատում է տարբեր ազգագրական շրջանների և Ղարաբաղի հեքիաթների սյուժեների ամենավաղ և ամենաուշ գրառումների համադրումը, որը ի հայտ է բերում որոշակի կայունություն: Այդ յուրահատկությունը հստակ դրսևորվում է նաև այլ ժանրերի համեմատության պարագայում:

Ղարաբաղի բանահյուսությունը հայ ժողովրդական հոգևոր մշակույթի անքակտելի օղակն է, նրա տեղական դրսևորումը և ունի կարևոր կուլտուր-պատմական, ճանաչողական նշանակություն ու արժեք:

---

բանահյուսության մեջ, Լրաբեր հաս. գիտ., № 3, 1996, **Ա. Ղազիյան**, Устное народно-поэтическое творчество Арцаха, Լրաբեր հաս. գիտ., № 7, 1990, **Ա. Ղազիյան**, Խ. ծ. վրդպ. Դադյանի ժողովրդագիտական-բանահավաքչական գործունեությունը, Հանդես ամսօրյա, Վիեննա, 1999, № 1-12, Ազատագրական պայքարի արտացոլումը Արցախի ժողովրդական երգերում, Պայքար ամսագիր, 1996, №№ 5-6 և այլն: